

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՅՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ
ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ
ԸՍՏ Ն. Ք. 28-27-ՐԴ ԴԱՐԻ ՔՐԵՂԱՆԻ
ԶԱՐԴԱՊԱՏԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ****

Ա.

Հայկական օրացոյցի ամենավաղ անցեալի պատմութեան համար տեղեկոյթի բացառիկ աղբիւր կարող են լինել հնագիտական գտածոները: Այսպիսի մի եզակի նմոյշ է Շէնգաւիթեան (Կուր-Արաքսեան) մշակոյթին պատկանող քրեղաններից մէկը:

Խօսքը 1974 թ. Շիրակում Գեթիի դամբարանադաշտի թիւ 8 դամբարանից գտնուած քրեղաններից մէկի մասին է: Այն ունի 14.5 սմ բարձրութիւն, սեւ փայլեցողած խեցիից է, մոխրագոյն, վարդագոյն աստառով, պատկանում է Կուր-Արաքսեան մշակոյթին²:

Ըստ առաջին հրապարակումների այս քրեղանը թուագրուում է Ն.Ք. Գ հազարամեակի երկրորդ կէսից Գ հազարամեակի վերջ³: Իսկ աւելի նոր աղբիւրներում այս նոյն իրը, ինչպէս նաեւ միեւնոյն դամբարանից գտնուած խեցեղէնի այլ նմոյշները, թուագրուած են Ն.Ք. 28-27-րդ դար⁴: Քրեղանիս իրանի վրայ կան ուշագրաւ զարդապատկերներ: Սրանք դասաւորուած են երկու մեծ խմբերով եւ զբաղեցնում են քրեղանի իրանի երկու կիսա-

^{**} Այս հետազոտութիւնը իրրեւ զեկուցում կարդացուել է 2006 թ. Սեպտ. 18-ին չորրորդ «Համարձումեանական ընթերցումներ»-ում՝ Բիւրականում, Վ. Համբարձումեանի Տուն-Թանգարանում:

² Այս նիւթը տարիներ առաջ ինձ է տրամադրել հնագէտ Համազասպ Խաչատրեանը, որի համար եւ նրան յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը:

³ Л. Петросян, изд. АН Арм. ССР, Ереван, 1989, стр. 43 – 44. Նաեւ՝ ՀԱՄԱԶԱՍՊ ԽԱԶԱՏՐԵԱՆ, Հիմ հայկական օրացոյցի մասին, Գիտական աշխատութիւններ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտութիւնների կենտրոն, Գիւմրի, 1998, էջ 14 - 16:

⁴ Տե՛ս www.shirakmuseum.am/HTML/EN/main_fr.html (18.09.2006):

զնդերը: Պայմանականորէն սրանք կ'անուանենք քրեղանի Ա եւ Բ երեսի պատկերներ: Առաւել ուշագրաւը Ա երեսի պատկերն է, որին էլ հէնց նուիրուած է ներկայ աշխատանքը:



Բ.


Օրացոյցի սկզբունքային կառուցուածքը

ա. Ընդհանուր դատողութիւններ

Քրեղանի Ա երեսին պատկերուած են ոճաւորուած վիշապ, թռչուն, փոքր վիշապ, երկու շեղանկիւններ եւ սլաքանման մի պատկեր:

Սլաքանման պատկերից զատ այս պատկերներից իւրաքանչիւրի մէջ թաց կաւի վրայ սեղմման եղանակով դրոշմուած են եռանկիւնաձեւ, հատիկաձեւ եւ գծակերպ նշաններ: Առաջին ականառու հանգամանքը, որով այս քրեղանի նախշերը տարբերւում են համանման այլ նմոյշների նախշերից, Ա երեսի պատկերների մէջ եղած նշանների թիւն է: Այդ նշանների ընդհանուր թիւը 365 է: Եւ այս թիւն էլ մեծ ճշդութեամբ համընկնում է արեւադարձային տարուայ օրերի թուին, որի համար ներկայումս

ընդունուած աստղագիտական ճշգրիտ արժէքը 365.2422 օր է⁵։ Անշուշտ, այսպիսի համընկումը պատահական սեպել կարելի չէ։ Եւ սա յուշում է, որ այս անօթի երեսի պատկերները պիտի շատ սերտ աղերսներ ունենան այն ստեղծողների օրացուցային պատկերացումների հետ⁶։



Արդ, հիմք ընդունելով այս շատ ճշմարտամօտ ընդունելութիւնը (որ անօթիս երեսի պատկերները պիտի շատ սերտ աղերսներ ունենան այն ստեղծողների օրացուցային պատկերացումների հետ), փորձենք պարզել, թէ ինչպիսի՞ն պիտի լինէին այս անօթն ստեղծողների օրացուցային պատկերացումները, եւ ինչպիսի՞ն պիտի լինէր այդ մարդկանց օրացոյցը, որ պատճառ լինէր քրեղանիս երեսին հէնց այսպիսի զարդապատկերներ դրոշմելուն։

Բնական է մտածել, որ, եթէ պատկերներում եղած նշանների թուերի գումարը հաւասար է տարուայ օրերի թուին, ապա այդ նշաններից իւրաքանչիւրը պէտք է նշանակի (խորհրդանշի)

⁵ Աւելի ստոյգ լինելու համար նշենք, որ արեւադարձային տարուայ ճշգրիտ տեւողութիւնը ներկայումս 365.242199 օր է, սակայն մեր խնդրի համար լիովին բաւարար է դրա կլորացուած արժէքը՝ 365.25 օր։

⁶ Այս գուգադիպութիւնը առաջին անգամ նկատել է Հ. Խաչատրեանը եւ հէնց նա էլ կատարել է այս նախշերի «օրացուցային» վերծանման առաջին փորձը. տե՛ս ՀԱՄԱԶԱՍՊ ԽԱԶԱՏՐԵԱՆ, Հիմ հայկական օրացոյցի մասին, Գիտական աշխատութիւններ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտութիւնների կենտրոն, Գիւմրի, 1998, էջ 14։

տարուայ մէկ օրը: Եւ, այս պարագայում էլ, դարձեալ բնական է եզրակացնել, որ առանձին պատկերներն ու դրանց փոխադարձ դիրքերը, դասաւորութիւնը պիտի նշանակեն տարուայ առանձին հատուածները եւ դրանց առնչութիւնները, իսկ այդ պատկերների (վիշապի, թռչունի, եւն) մէջ խմբաւորուած նշաններն էլ պիտի նշանակեն տարուայ առանձին հատուածների (տարուայ եղանակների, ամիսների եւն) մէջ պարունակուած օրերը: Այսինքն, այս պատկերների վերլուծութիւնը կարող է մեզ տեղեկութիւն տալ սոյն քրեղանի ստեղծման ժամանակուայ օրացոյցի կառուցուածքի մասին:

Արդ, տեսնենք, թէ ինչ ունենք այս պատկերների վերլուծութեան համար:

Նախ նկատենք, որ այս պատկերների վերլուծութիւնը հնարաւորինս աւարկայական (objective) անելու համար հարկ է նուազագոյնի հասցնել օգտագործուելիք կողմնակի տեղեկոյթը: Ըստ այսմ, թէպէտ մենք այսօր ունենք բաւական բազմազան տեղեկութիւններ հայ միջնադարեան եւ աւելի հին օրացոյցների մասին⁷, այդուհանդերձ, սոյն վերլուծութեան ընթացքում կը ջանանք առաւելագոյնս սահմանափակել դրանց օգտագործումը: Աւելի շատ կ'օգտագործենք ընդհանուր տեղեկութիւններ օրացոյցի աստղագիտական հիմունքների մասին: Այս կերպ կը փորձենք նուազագոյնի հասցնել հնարաւոր կանխակալ մօտեցումը:

Ինչպէս վերը նշուեց, պատկերների մէջ կան երեք տիպի նշաններ. եռանկիւնաձեւ, հատիկաձեւ եւ գծակերպ: Նշանների հիմնական մասը եռանկիւնաձեւ է (325 նշան). հատիկաձեւ նշանները 37 հատ են, իսկ գծակերպ նշանները՝ 3: Այս տարբերութիւնների օրացուցային իմաստը առայժմ անյայտ է: Ըստ այսմ, առաջիկայ քննութեան ընթացքում նշանների տարբերութիւնները զանց կ'առնենք:

Ամբողջ պատկերի հիմնական մասը մեծ վիշապի պատկերն է: Այն բաղկացած է քրեղանի «միջօրէականի» նկատմամբ համա-

⁷ Տե՛ս, օրինակ, ԳՐ. ԲՐՈՒՏԵԱՆ, Հայոց Տոմարի Որոշ Հարցերի Մասին. Նախահայկեան օրացոյցի կառուցումաճիւղ, «էջմիածին», ԺԲ, 1996, էջ 135 - 164, ԳՐ. ԲՐՈՒՏԵԱՆ, Հայկական օրացոյցը իր սկզբնաւորումից մինչեւ մեր օրերը, «Ռուբիկոն», 1/1, 1999, էջ 14 - 27, եւ 1/2, 2000, էջ 5 - 21, ԹՈՒՄԱՆԵԱՆ Բ. Ե., ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ Յ. Յ., Բրոնզէ դարի գօտի-օրացոյց, «Միտք», Երեւան, 1965:

չափ դասակարգված երկու կէսից: Ընդ որում, այդ կէսերը իրար նման են թէ՛ գծապատկերով, թէ՛ չափերով, եւ թէ՛ պարունակած նշանների քանակով. երկու կէսում էլ առկայ են 95-ական նշաններ: Միեւնոյն ժամանակ, կան նաեւ տարբերութիւններ: Վիշապի աջ եւ ձախ կէսերում գտնուող նոյնական հատուածները պարունակում են տարբեր թուով նշաններ:

Վիշապի ձախ կէսի կոնակի մեծ կուզի տակ տեղակայուած է թռչունի պատկերը: Սա եւս պարունակում է 95 նշան: Վիշապի երկու կէսերի միացման կէտից վար, դրան կից մի փոքր շեղանկիւմ է 10 նշաններով, իսկ վիշապի աջ կէսի տակ՝ թռչունի պատկերին համաչափ դիրքով տեղակայուած է մեծ շեղանկիւմը 24 նշաններով: Սրանից վեր՝ սրա եւ վիշապի աջ կէսի կուզի տակ սլաքանման մի գծանկար է, առանց նշանների⁸: Վիշապի պատկերի կենտրոնում, դրանից փոքր-ինչ վեր վիշապին նման մի այլ պատկեր է: Առայժմ, քանի դեռ չենք պարզել սրա ինչ լինելը, սա պայմանականօրէն կ'անուանենք «փոքր վիշապ»: Այս պատկերը պարունակում է 46 նշաններ:

Այս պատկերներից իւրաքանչիւրը, իր հերթին, բաղկացած է տարբեր թուով նշաններ պարունակող հատուածներից: Եթէ հիմք ընդունենք վերն արուած դատողութիւնները օր-նշան եւ տարուայ մասեր-պատկերներ զուգահեռների վերաբերեալ, ապա տարբեր պատկերների ներքին կառուցուածքն էլ պիտի համապատասխանի տարուայ տարբեր հատուածների տարբեր ներքին կառուցուածքներին:

բ. Տարեշրջանի սկզբումբային կառուցուածքը

Արդ, փորձենք այս դատողութիւնների հիման վրայ տեսնել, թէ օրացուցային տարուայ ինչպիսի կառուցուածք կարող է մեզ տալ քրեղանիս Ա երեսի պատկերի վերլուծութիւնը:

Նախ կատարենք մի շատ ճշմարտամօտ ընդունելութիւն: Քանի որ սոյն քրեղանը գտնուած է Հայաստանում եւ, որպէս խեցեղէնի նմոյշ, իր բոլոր յատկանիշներով պատկանում է հին հայկական մշակոյթին, բնական է ընդունել, որ նրա վրայի նախ-չերով արտայայտուած օրացոյցն էլ իր ժամանակին կիրառուել է

⁸ Քրեղանիս առաջին հետազոտողի կարծիքով սա ծագող Արեւի պատկեր է. տե՛ս ՀԱՄԱԶԱՍՊ ԽԱԶԱՏՐԵԱՆ, նշ. աշխ.:

Հայաստանում ուստի եւ այդ օրացոյցին վերաբերող մի շարք հանգամանքներ պիտի առկայ լինեն հայկական հին եւ հընազոյն օրացոյցների մասին մեզ հասած տարաբնոյթ տեղեկութիւնների շարքում: Եւ, ըստ այսմ, մեր վերլուծութեան համար անհրաժեշտ կողմնակի տեղեկոյթը կը փնտռենք նախ եւ առաջ հայկական պատմական-մշակութային իրողութիւնների մէջ:

Սկսենք նրանից, որ ունենք ընդհանուր առմամբ 5 պատկեր նշաններով եւ մէկ պատկեր էլ առանց նշանների (վիշապ, քոչուր, փոքր վիշապ, փոքր շեղանկիւն, մեծ շեղանկիւն՝ նշաններով եւ սլաքամման պատկեր՝ առանց նշանների): Միեւնոյն ժամանակ, վիշապի պատկերը կարելի է դիտել իբր երկու առանձին, իրար շատ նման (բայց ոչ նոյնական) պատկերների համակցութիւն, կցման կէտ ընդունելով դրանց մէջտեղը (փոքր շեղանկեանը կից կէտը): Այնպէս որ, կարող ենք պատկերների ընդհանուր թիւը համարել ոչ թէ 6, այլ 7: Սրանցից մէկը ոչ մի նշան չի պարունակում, երեքը պարունակում են 95-ական նշան, մէկը՝ 46, մէկը 24 եւ մէկն էլ՝ 10: Նշանների հիմնական մասը հաւաքուած է երեք մեծ պատկերների մէջ՝ վիշապի աջ եւ ձախ կէսերի եւ թռչունի մէջ: Եւ ուշագրաւ է, որ այս երեք խոշոր պատկերները պարունակում են հաւասար թուով՝ 95-ական նշաններ: Ի դէպ, այս 95-ը շատ մօտ է տարուայ եղանակների պարունակած օրերի թուերին: Անշուշտ, տարուայ եղանակները ունեն ոչ հաւասար տեւողութիւններ: Ըստ արդի աստղագիտութեան տուեալների տարուայ եղանակներն ունեն հետեւեալ տեւողութիւնները. Ամառ- 93.6 օր, Աշուն- 89.8 օր , Ձմեռ- 89.0 օր, Գարուն- 92.8 օր⁹: Նկատենք, միեւնոյն ժամանակ, որ հայկական աւանդական տոմարագիտութեան մէջ տարուայ եղանակների տեւողութիւնների համար ընդունուած են եղել հետեւեալ արժէքները. Ամառ- 91 օր եւ 3 ժամ, Աշուն- 91 օր եւ 3 ժամ, Ձմեռ- 92 օր եւ 3 ժամ, Գարուն- 91 օր եւ 3 ժամ¹⁰: Միեւնոյն ժամանակ, Հայաստանի եղանակային պայմաններն այնպիսին են, որ ցայտուն արտայայտուած են տարուայ հէնց երեք եղանակներ՝ Ամառ, Աշուն եւ Ձմեռ: Ընդհանրապէս, կարելի է խօսել

⁹ Տէս, օրինակ, Բ.Ե. ԹՈՒՄԱՆԵԱՆ, Լ.Վ. ՄԻՐՁՈՅԵԱՆ, Աստղագիտութիւն, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 1978, էջ 22:

¹⁰ Ա.Շ. ԱՐԱՆՍՄԵԱՆ, Յովհաննէս Խմաստասէրի մատենագրութիւնը, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 1956, էջ 211 - 212:


նոյնիսկ միայն երկու եղանակից բաղկացած տարրուայ մասին, նկատի ունենալով այն, որ Հայաստանում տարրուայ համարեա կէսը ձմեռ է, եւ բացի այդ էլ, ի հիմնաւորումն սրան, հայերէնում ունենք «ամառ-ձմեռ» արտայայտութիւնը, որ նշանակում է «ամբողջ տարին»: Ըստ այսմ կարող ենք համարել նոյնիսկ, որ հէնց վիշապն իր երկու կէսերով ու թռչումը միասին ներկայացնում են տարին: Այստեղ բնականօրէն հարց է առաջանում. բայց չէ՞ որ այս երեք պատկերների նշանների թուերի գումարը ընդամենը $95 + 95 + 95 = 285$ է: Նախ նկատենք, որ մեծ վիշապի պատկերին կից է փոքր շեղանկիւնը իր պարունակած 10 նշաններով: Այսինքն, կարող ենք համարել, որ տարրուայ այն հատուածը, որ համարժէք է վիշապի աջ ու ձախ կէսերի համադրութեանը, ունի իրեն կից մի փոքրիկ հատուած եւս՝ բաղկացած միայն 10 օրից: Եւ, ըստ այսմ, տարրուայ այս մեծ հատուածի օրերի թիւը կը լինի $95 + 95 + 10 = 200$: Այսինքն, տարին պարունակում է մի մեծ հատուած, որ բաղկացած է իրար շատ նման (ինչ որ առումով՝ նոյնական) երկու մասերից եւ բացի այդ ունի ամբողջին կից մի յաւելեալ մաս եւս՝ բաղկացած 10 օրերից: Եւ իր յաւելեալ օրերի հետ միասին տարրուայ այս հատուածի տեւողութիւնը 200 օր է:

Տարրուայ յաջորդ խոշոր հատուածը համապատասխանում է թռչումի պատկերին: Այս հատուածը պիտի պարունակի 95 օր՝ թռչունի պատկերում եղած 95 նշաններին համապատասխան: Տարրուայ այս երկու խոշոր հատուածները միասին կը պարունակեն $200 + 95 = 295$ օր:

Մնացեալ երկու պատկերներին՝ փոքր վիշապին եւ մեծ շեղանկեանը համապատասխանող տարրուայ հատուածների օրերի թիւը լինում է $46 + 24 = 70$: Ընդ որում, տարրուայ այս երկու մասերը էապէս տարբեր են տարրուայ միւս՝ մեծ հատուածներից: Սրանք որոշակիօրէն առանձին են տարրուայ մնացեալ մասերից: Եւ գտնւում են տարրուայ հիմնական մասի տարբեր կողմերում: Իրօք, սրանց դասաւորութիւնը քրեղանի պատկերի վրայ աչքի է զարնում նախ նրանով, որ սրանք երկուսն էլ կպած չեն մեծ պատկերներին, եւ ապա սրանք գտնւում են վիշապի նկատմամբ հակադիր կողմերում. փոքր վիշապը վիշապից վեր է, իսկ մեծ շեղանկիւնը՝ վիշապից վար: Այսինքն, ստանում ենք տարրուայ կառուցուածքի այսպիսի մօտաւոր պատկեր. $(200 + 95) + (46 + 24) = 365$ օր, կամ $295 + 70 = 365$ օր:

Տարեչրջանը, այսպիսով, բաժանուում է երեք հիմնական պատկեր-պատկերախումբ-կերպարների միջև եւ, ըստ այսմ, երեք մասի։ Վիշապ՝ իր երկու կէսերով եւ կից փոքր շեղանկիւնով ($95 + 95 + 10 = 200$ օր), թռչում (95 օր) եւ փոքր վիշապ ու մեծ շեղանկիւն ($46 + 24 = 70$ օր)։

Արդ փորձենք ընդհանուր դատողութիւններով գտնել, թէ տարեչրջանի ո՞ր մասերում պիտի լինեն այս հատուածները, այսինքն՝ պարզենք սրանց դասաւորութիւնը արեւադարձային տարուայ մէջ։ Դրա համար նախ քննենք, թէ ի՞նչ կարող է նշանակել տարուայ տարբեր մասերը այս կերպարներին զուգադրելը, եւ ի՞նչ կերպ է հնարաւոր այդ կերպարներից ու դրանց խորհուրդներից անցնել դրանց համապատասխանող ժամանակային իրողութիւններին։ Սկսենք նախ փոքր վիշապից։



Փոքր վիշապի պատկերը մի էական տարբերութիւն ունի բուն վիշապի պատկերից. փոքր վիշապի պատկերի մէջտեղում կայ տակից վար իջնող մի ելուստ միակողմանի (աջակողմեան) սլաքով¹¹։ Սա յիշեցնում է

հայկական ժայռապատկերներում յաճախ հանդիպող առնի անդամի պատկերները¹², որ, համաձայն ընդունուած կարծիքի, մեկնաբանուում է իբր բեղմնաւորման ծէսի պատկեր, կամ բեղմնաւորման խորհուրդ, կամ դրանց սերտ աղերս ունեցող մի այլ բան։ Ըստ այսմ, եթէ փոքր վիշապի պատկերը կապենք բեղմնաւորման գործողութեան, կամ ծէսի եւ կամ խորհուրդի հետ, ապա դրան համապատասխանող ժամանակը պիտի կապենք տարեչրջանի այն մասի հետ, որ ամենասերտ կապն ունի բեղմնաւորման հետ։ Անշուշտ, այդ ժամանակը ամառնամուտին նախորդող չրջանն է (ըստ էութեան՝ գարունը կամ գարնան երկրորդ կէսը)։ Մինչ ա-մառնամուտ տեղի է ունենում եւ աւարտուում Հայաստանի բուսա-

¹¹ Այս պատկերի հանգամանալի քննութիւնը կը լինի ստորեւ՝ յընթաց փոքր վիշապին համապատասխանող տարեմասի քննութեան։ Իսկ այստեղ սահմանափակուենք միայն դրա մի տարրի իմաստի մասնակի ճշգրտմամբ։

¹² ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Հայաստանի նախնադարեան նշանագրերը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 118, 172։

կան աշխարհի ծաղկում-փողոտում-բեղմնաւորումը: Այս շրջանում է եւ Հայաստանի թուչունների մեծ մասի զուգաւորումը: Մինչ ամառնամուտ է նաեւ անձրեւների շրջանը, երբ արական Երկիբը իր կենսատու հեղուկը թափում է իգական Երկրի վրայ եւ «բեղմնաւորում» նրան: Հայաստանում, ինչպէս յայտնի է, տարեկան անձրեւների առաւելագոյն քանակը գարնանն է լինում՝ հիմնականում Ապրիլ-Մայիս եւ մասամբ Յունիս ամիսներին՝ մինչեւ ամառային արեւադարձ¹³: Ընդ սմին, այս շրջանը նաեւ երկրագործական աշխատանքների սկզբի, գարնանային վարի ու ցանքսի շրջանն է. իսկ վար ու ցանքսի աղերսները բեղմնաւորման խորհրդի հետ աւելի քան ակնյայտ են: Այդուհանդերձ, աւելորդ չէ վկայակոչել մինչեւ 20-րդ դարը (նոյնիսկ՝ մինչեւ 1970-80-ական թուականները) Հայաստանի որոշ հատուածներում պահպանուած՝ վար ու ցանքսին ուղեկցող բեղմնաւորում խորհրդանշող ծիսական գործողութիւններ կատարելու աւանդոյթը: Ընդ որում, դրանց թւում՝ տղամարդու եւ կնոջ միջեւ բացայայտ եւ ծածուկ կատարուող (բեղմնաւորում խորհրդանշող) երկխօսութիւններից եւ այլ գործողութիւններից զատ կայ նաեւ կէսգիշերին լուռ, գաղտնի կատարուող զուտ արական ծէս՝ համայնքի նահապետի գլխաւորութեամբ արուող ծիսական սերմնաթափութիւն¹⁴: Այսպիսով, փոքր վիշապին վերաբերող ժամանակատուածը պիտի լինի գարնանը՝ առաւելագոյն անձրեւների շրջանում, այսինքն՝ ամառնամուտին նախորդող շրջանում՝ Մայիս-Յունիս ամիսներին: Արդ անցնենք թուչունի պատկերին:

Թուչունի պատկերը հարկ է կապել Արեւի հետ: Հայկական աւանդական պատկերազրույթեան համակարգում թուչունը հանդէս է գալիս որպէս Արեւի նշանակ: Սա հաւաստող բազում փաստերից բերենք միայն երկու օրինակ: Առաջինը Ուրծ գաւառից բերուած եւ ներկայումս Ս. էջմիածնի բակում կանգնեցուած


¹³ Տէս Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Ատլաս, ՀՍՍՌ ԳԱ, Երեւան-Մոսկվա, , 1961, էջ 28:

¹⁴ Լ.Լ.Թ. ԵՐՆԱԿԵԱՆ, ՀՌԻԺՍԻՄԷ ՊԻԿԻՉԵԱՆ, Հիմն Արեւիմ. «Սահարիմ» Հայ երաժշտական մշակոյթում, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1998, էջ 15 - 16, նաեւ՝ ՀՌԻԺՍԻՄԷ ՊԻԿԻՉԵԱՆ, Հայ միջնադարեան պատկերացումները կենսատարածքի մասին, Հանդէս Ամսօրեայ, ՃԺՁ տարի, թիւ 1 - 12, 2002, էջ 441 - 460:



Փ. 1279 թ. «Ամենափրկիչ» խաչքարի վերնամասում Արեւի եւ Լուսնի պատկերներն են: Արեւն այստեղ պատկերուած է քռշունի թիկունքին հանգրուանած ճաճանշաւոր սկաւառակի տեսքով, իսկ Լուսինը՝ ցուլի մէջքին հանգըրուանած անճաճանշ սկաւառակի: Այստեղ թիւրիմացութիւն լինել չի կարող, քանի որ պատկերներին շրջապատող զարդաքանդակների մէջ գը-

րուած է «Արեգակն» թռչունի շուրջը եւ «Լուսին» ցուլի շուրջը: Կարելոր է նաեւ, որ այս կարգի պատկերները հայկական խաչքարերի վրայ եղակի չեն: Այս նոյն պատկերազրական իրողութիւնը առկայ է նաեւ հայկական միջնադարեան մանրանկարչութեան եւ կիրառական արուեստի այլ ճիւղերի մէջ: Այստեղ բազմաթիւ են խաչելութեան տեսարանում խաչուած Քրիստոսի պատկերի վերին ձախ եւ աջ անկիւններում Արեգակի եւ Լուսնի պատկերները: Սրա լաւագոյն նմոյշներից աստ բերենք 1315 թ. Խորդենեաց անապատում (Նախիջեւան) Մարգարէի նկարազարդած աւետարանի (Մ. Մ. թիւ 2930) պատկերը:



Արեգակ-Թռչուն նոյնացման համար մի այլ ցայտուն օրինակ է հայ ժողովրդական հետեւեալ հանելուկը.

«Խաւքըմ ընցաւ Երկրնուց.

Ոսկի լական կեր կըտուց»¹⁵:

Հանելուկիս պատասխանն է «Արեգակն»: Իսկ բովանդակութիւնը, եթէ Վանայ բարբառից վերածենք արդի արեւելահայերէնի, կը լինի.

«Անցաւ երկնքով հաւք մի

Օղակ կար կտցին ոսկի»:

Բաւարար համարելով Թռչուն-Արեգակն համարժէքութեան հիմնաւորումը, արդ նայենք, թէ օրացուցային առումով ի՞նչ պիտի նշանակի տարուայ 95-օրեայ մի հատուածը Արեւի նշանակով նշանակուած լինելը եւ, ըստ այդմ, արեւադարձային տարուայ ո՞ր մասում կարող է լինել Արեգակին (Թռչունին) վերաբերող ժամանակահատուածը:

Տոմարին վերաբերող գրականութեան մէջ շատ տարածուած է համարել, որ Արեւին վերաբերող խորհուրդները, ծէսերը, տօները պիտի անպայման համընկնեն գարնանամուտին¹⁶: Հակառակ այն բանին, որ գրքից-գիրք ժառանգուող այս մօտեցումը այնքան էլ լաւ հիմնաւորուած չէ (կարելի է ասել՝ բնաւ հիմնաւորուած չէ, թէպէտ կարելի է եւ հիմնաւորել), այդուհանդերձ սկսենք հէնց գարնանամուտը քննարկելուց:

Ինչպէս վերը տեսանք, փոքր վիշապը, բեղմնաւորման խորհրդի հետ կապի պատճառով, կապուած է գարնանը, այսինքն՝ տարուայ՝ փոքր վիշապին համապատասխանող հատուածի 46 օրերը պիտի լինեն գարնանը: Ուստի, այս առումով, գարունը արդէն «գեղադուած» է: Իսկ տարուայ՝ Թռչուն-Արեգակին վերաբերող մասը 95-օրեայ է եւ գարնանից մնացած 45 - 48 օրերի մէջ չի կարող տեղաւորուել: Եւ այսու՝ Թռչուն-Արեգակին վերաբերող տարուայ 95-օրեայ մասը չի կարող կապուել գարնանային գիշերահաւասարի, որ է՝ գարնանամուտի հետ: Մնում է դրա տեղը փնտռել այլուր: Արեւի միւս ականաւոր դիրքերը երկնքում ձմեռնամուտի եւ ամառնամուտի դիրքերն են՝ արեւադարձերը: Այս կէտերում Արեգակը լինում է երկնակամարով իր «ճամփոր-

¹⁵ Ա. Բ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Հայ ժողովրդական հանելուկներ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1965, էջ 3:

¹⁶ Տե՛ս, օր., Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Յուշիկի հայրենաց Հայոց, հ. 1, Վենետիկ, 1869, էջ 88:

դուլթեան» ամենացածր եւ ամենաբարձր դիրքերում: Յայտնի է, որ միհրապաշտութեան մէջ տօնուել է «Անյաղթ Արեւ աստծու ծննդեան տօնը» ձմեռնամուտի շրջանում՝ Դեկտեմբերի 25-ին¹⁷: Սակայն մեր պարագայում հարկ է ձմեռնամուտը զանց առնել: Բանն այն է, որ Հայաստանի եղանակային պայմաններում ձմեռը տեւական է եւ խստաշունչ, հիմնականում՝ ամպամած երկնքով: Եւ Արեւն էլ, եթէ երբեմն երեւում է մռայլ երկնքում, շատ սակաւադէպ է լինում, որ երեւայ իր ամբողջ ճոխութեամբ. հիմնականում լինում է թոյլ ու պղտոր: Ըստ այսմ, տարեշրջանի՝ Արեգակին ձօնուած մասը Արեգակի ամենասակաւ, ամենավատ տեսանելիութեան շրջանում դնելը, մեղմ ասած, այնքան էլ հաւանական չէ: Բացի այդ, կարեւոր է եւ այն, որ ձմռանը Հայաստանից բացակայում են չուող թռչունները, եւ թռչնային աշխարհը էապէս աղքատացած է լինում: Տարակուսելի է թւում, որ թռչունների հիմնական մասի բացակայութեան ժամանակաշրջանի համար իբր նշանակ-խորհրդանիշ հանդէս գայ հէնց թռչունը: Ըստ այսմ եւս, ձմեռնամուտը յարմար չէ թռչուն-Արեգակին ձօնուած շրջանի հետ կապուելու համար: Բնականաբար, մնում է ամառնամուտը: Ամառնամուտի «օգտին» է ոչ միայն այն, որ գարնանամուտն ու ձմեռնամուտը վերոնշեալ պատճառներով բացառւում են, այլ նաեւ այն, որ Հայաստանի բազմաթիւ թռչունների համար այս շրջանը թխսելու-ճուտ հանելու եւ ճրտերը թոցնելու ժամանակն է: Ապրիլ-Մայիսին են ձուադրում հայկական աւանդական պատկերացումներում մեծ կարեւորութիւն ունեցող թռչուններից կուռնկները, արօսները, արծիւների, անգղների եւ այլ գիշատիչների մեծ մասը, իսկ Մայիս-Յունիս ամիսներին էլ ձուադրում են ծիծեռնակները, սոխակները սարեակները: Ծննդուկները, ընդհանրապէս, ձուադրում են ամռանը: Եթէ հաշուի առնենք, որ թռչունների ճտերը դուրս են գալիս հիմնականում 3 - 4 շաբաթում, ստացւում է, որ ամառնամուտը նշուած թռչունների մեծ մասի համար ամենակարեւոր ժամանակն է: Այնպէս որ, ըստ այսմ, ամառնամուտի շրջանը առաւել քան յարմար է արեւի նշանակ թռչունով խորհրդանշուած լինելու համար: Ուստի, ըստ այս դատողութիւնների, հարկ է թռչ-

¹⁷ Ի դէպ, Հռոմէական կայսրութեան մէջ մեծ շուքով տօնուող հէնց այս տօնն է եղել պատճառը, որ արեւմտեան եկեղեցիները Գ-Դ դարերում Քրիստոսի ծննդեան տօնը Յունուարի 6-ից տեղափոխեցին Դեկտ. 25: Այս մասին տե՛ս, օր., ԱՐՏԱԿ ԱՐՓԵՊ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Հայ եկեղեցու տօները, «Նայիրի», Թեհրան, 1999, էջ 41-41:

չուն-Արեգակին վերաբերող ժամանակը դնել հենց ամառնամուտի շրջանում (սկիզբը ամառնամուտի մօտ):

Այսպիսով, պարզեցինք մեր տարեշրջանի երեք հատուածներից երկուսի մօտաւոր տեղը (փոքր վիշապը մեծ շեղանկեան հետ միասին եւ թռչունը):

Վիշապի եւ կից փոքր շեղանկեան պատկերներին համապատասխանող տարեմասի տեղը որոշում է բացասման եղանակով: Քանի որ որոշել ենք մեր տարեշրջանի երեք հատուածներից երկուսի (փոքր վիշապի մեծ շեղանկեան հետ միասին եւ թռչունի) մօտաւոր տեղերը, ապա, բնականաբար, երրորդի (մեծ վիշապի՝ կից փոքր շեղանկիւնով) տեղը որոշում է ինքնաբերաբար: Քանի որ ամառնամուտը (բնականաբար՝ նաեւ դրան յաջորդող ամբողջ ամառը) եւ գարնան մի զգալի մասը Մայիս-Յունիս հատուածով (մինչ ամառնամուտ) «զբաղուած» են, մնում է տարուայ աշուն-ձմեռ հատուածը եւ, գուցէ, գարնան մի մասը: Ուրեմն, մեծ վիշապին (եւ կից փոքր փոքր շեղանկեանը) վերաբերող ժամանակը պիտի լինի հիմնականում աշուն-ձմեռ հատուածում: Այստեղ տեղին է յիշել, որ Արեւի խաւարման ժամանակ Արեգակի շերտէսը աւանդաբար բացատրուել է նրանով, թէ իբր վիշապը կուլ է տուել Արեւին, կամ ծածկել է նրան: Վանական վարդապետը գրում է. «Եւ ասեմ ամպեր Ռաստ եւ Զանապ աճում, քէ նոքա խաւարեցուցանեմ զարեգակն եւ զուսին»¹⁸: Նոյն Ռաստ եւ Զանապ ամպերի մասին կայ նաեւ Վարդան Արեւելցու պատմութեան մէջ¹⁹, իսկ միջին հայերէնի բառարանն էլ այս ամպերի անունները մեկնում է իբր վիշապ հաստեղութեան գլուխն ու պոչը²⁰: Ընդհանրապէս, այստեղ խօսքը ոչ թէ այսօր յայտնի Վիշապ համաստեղութեան մասին է, այլ երկնային վիշապի, որն ըստ շատ տարածուած հնագոյն պատկերացումների հենց բուն պատճառն է Արեգակի եւ Լուսնի խաւարումների: Եւ այս մասին պահպանուել են բազմաթիւ տեղեկութիւններ հայ միջնադարեան մատենագրութեան մէջ²¹: Այ-

¹⁸ Տե՛ս Լ. ԽԱԶԻԿԵԱՆ, «Յաղագս տարեմտին ի վանական վարդապետէ աւացեալ», Մատենադարանի Գիտական նիւթերի ժողովածու, 1, Երեւան, 1941, էջ 162, եւ ծանօթագրութիւն 12, էջ 168-169:

¹⁹ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ, Տիեզերական պատմութիւն, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 2001, ԶԱ, էջ 131-132:

²⁰ Ռ. Ս. ՂԱԶԱՐԵԱՆ, Հ. Մ. ԱԻԵՏԻՍԵԱՆ, Միջին հայերէնի բառարան, Երեւանի Համալսարանի հրատ., հ. 1, Երեւան, 1987, էջ 207, հ. 2, Երեւան, 1992, էջ 302:

²¹ Տե՛ս որոշ օրինակներ Բ. Ե. ԹՈՒՄԱՆԵԱՆ, Հայ աստղագիտութեան պատմութիւն, «Միտք», Երեւան, 1964, էջ 232 - 239:

սինքն, երկնային վիշապը սերտօրէն առնչուած է Արեւի մահա-
նալու-չերեւալու հետ²²։ Եւ, ըստ այսմ, շատ յարմար է վիշապին
աշուն-ձմեռ հատուածը գուգադրելը, որպէս Արեւի աստիճանա-
կան տկարացման, մահացման ժամանակ։ Այսինքն, քրեղանիս պատ-
կերների վերլուծութեամբ տարեշրջանի մէջ վիշապին վերաբե-
րող հատուածի համար ստացուած այսպիսի տեղադրումը լիովին
ներդաշնակ է Արեւ-վիշապ առնչութիւնների մասին եղած աւան-
դական պատկերացումներին։

Այս դատողութիւններն ամբողջացնելու համար հարկ է պար-
զել նաեւ մեծ շեղանկեան տեղը։ Մենք սա կցել էինք փոքր վի-
շապին, որպէս միւս պատկերներից դուրս եւ դրանցից էապէս ա-
ռանձին հատուածներ, եւ այս երկուսից մէկի (փոքր վիշապի) մի-
ջոցով էլ որոշեցինք, այս «առանձին» գոյգի ընդհանուր տեղը (գա-
րուկ-Մայիս-Յունիս)։ Հիմա նայենք այս երկու պատկերների եւ
միւսների առնչութիւնը փոքր-ինչ աւելի մանրամասն։ Նախ, նկա-
տելի է, որ փոքր վիշապն ու մեծ շեղանկիւնը դասաւորուած են
բուն վիշապի հակառակ կողմերում, մէկը վիշապից վեր, միւսը՝
վար։ Աւելին, փոքր վիշապը վեր է ոչ միայն բուն վիշապից, այլ
նաեւ թռչունից, որով այս գոյգը, ասես, սահմաններ է դնում քռո-
չում + վիշապ երկար հատուածի սկզբին եւ վերջին։ Եւ, եթէ տա-
րեշրջանը ներկայացնենք օղակի-շրջանակի տեսքով, կը լինի այս-
պիսի պատկեր։ Ստանում ենք, որ տարեշրջանը մի ծայրից սահ-
մանափակուած պիտի լինի փոքր վիշապով (նրան վերագրուած
հատուածով), սրանից յետոյ պիտի լինի բուն տարուայ առաջին
մասը՝ քռչումը, ապա տարուայ վերջին մասը՝ բուն վիշապն իր
երկու կէսերով ու կից փոքր շեղանկիւնով եւ այս շարքը վերջից
պիտի սահմանափակուած լինի մեծ շեղանկիւնով։

Տ	Ա	Ր	Ե	Շ	Ր	Ջ	Ա	Ն
տարուց դուրս	Տ	Ա	Ր	Ի				տարուց դուրս
փոքր վիշապ	քռչում		վ	ի	շ	ա	պ	մեծ շեղանկիւն
ցարուն	ամառն		աշուն	ձմեռն				գարուն

Եւ, քանի որ սա շրջան է՝ տարեշրջան, ապա մեծ շեղան-
կիւնն ու փոքր վիշապը պիտի լինեն իրար կից, որով եւ շրջա-
նը կը փակուի-կ'ամբողջանայ։ Այստեղից հետեւում է, որ տարե-
շրջանը պիտի սկսուի թռչունով եւ շարունակուի բուն վիշապով,

²² Արեգակ-վիշապ հակամարտութեան, կուռի մասին տե՛ս նաեւ Մ. ԱԲԵՂԵԱՆ, Երկեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Կ. է, Երեւան, 1975, էջ 68։

խակ փոքր վիշապն ու մեծ շեղանկիւնը, դուրս մնացած լինելով բուն տարեշրջանից, տարբեր ծայրերից (սկզբից եւ վերջից) եզերում-սահմանափակում են տարին եւ միեւնոյն ժամանակ, իրար են կցում ժամանակի երկու ծայրերը՝ սկիզբն ու վերջը: Տարեշրջանի սկիզբն էլ պիտի լինի ամառնամուտի շրջանում: Ահա այսպէս, միայն ընդհանուր դատողութիւններով, հնարաւոր եղաւ ընդհանուր գծերով պարզել, թէ ինչ հատուածներից է բաղկացած եղել տարին եւ ինչպէս են այդ հատուածները դասաւորուած եղել արեւադարձային տարուայ մէջ ըստ քրեղանիս Ա երեսի պատկերի վերլուծութեան:

Այսպիսով, միայն ընդհանուր դատողութիւնների եւ օրացոյցի աստղագիտական հիմունքների մասին նուազագոյն տեղեկութիւնների հիման վրայ հնարաւոր եղաւ պարզել մեզ հետաքրքրող օրացոյցի սկզբունքային կառուցուածքը ընդհանուր գծերով:

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

The Oldest Armenian Calendar Concept According to the Analyze of the Ornaments of a Vessel from 28-27th c. B.C.

GRIGOR BROUTIAN*

(summary)

The analyze of the ornaments of a 28-27th c. B.C. vessel found from Shirak region in Armenia makes it possible to restore the concept of the calendar of Armenia of early bronze age. According to this restoration the duration of tropic year (about 365 days) was divided into two main parts: the exact year (about 200 days) and the period that was not included into the year (about 70 days). This out of year period itself was divided into two parts: one- before the year (46 days), and the other- after the year (24 days). The beginning of the year was in the region of summer solstice. The year corresponds to the period summer-autumn-winter, while the two parts of the out of year period corresponds mainly to spring.

* Viktor Ambartsumian Museum, Byurakan, Aragatsotn, 0213, Armenia, E-mail: vhm@sci.am, gbrout@mail.ru.